

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային
ծառայությունների միավորված կոլեգիա**

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2014 թվականի

թիվ 10/12

քաղ. Նովոպոլոցկ

**Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
ռիսկերի կառավարման համակարգի իրագործման առանձին հարցերի մասին**

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների
միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել գործարքի բնույթի ծածկագրերի ցանկերը գործարքի բնույթի այն դասակարգիչներին համապատասխան, որոնք հաստատվել են Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ի, Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի եւ Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից եւ որոնք կիրառվում են որպես ռիսկի ցուցիչներ առուվաճառքի գործարքներից տարբերվող այլ գործարքների շրջանակներում տեղափոխվող ապրանքների նկատմամբ (հավելված թիվ 1):

2. Հաստատել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ապրանքների ծագման երկրի մասին ոչ հավաստի տեղեկությունների հայտարարագրման ռիսկերի ոլորտների հայտնաբերման մեթոդիկան (հավելված թիվ 2):

3. Հաստատել ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների ցանկը՝ ռիսկերի միասնականացված ցուցիչներ պարունակող ռիսկերի պրոֆիլների մշակման եւ կիրառման ընթացքում օգտագործելու համար (հավելված թիվ 3):

4. Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՌԿԵԼՕՀ, Վ. Ի. Գոլոսկոկով), Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին (ՄՀԿՎ, Վ.Ն Օռլովսկի.), Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ՌՎՎՎ, Ա. Մ. Կոլբայ)՝ ռիսկերի պրոֆիլները

ծեւաւորելիս օգտվել սույն Որոշման 1-ին եւ 2-րդ կետերով հաստատված փաստաթղթերից:

5. Ռուսաստանի ԴՄԾ-ին (ՌԿԵԼՕՀ, Վ. Ի. Գոլոսկոկով), Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ին (ՄՀԿՎ, Վ.Ն. Օռլովսկի), Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ-ին (ՌՎՎՎ, Ա. Մ. Կոլբայ)՝ ռիսկերի պրոֆիլները ծեւաւորելիս ռիսկերի միասնականացված ցուցիչների հիման վրա օգտվել ռիսկերի նվազեցման միջոցներից՝ սույն Որոշման 3-րդ հավելվածում պարունակվող ցանկին համապատասխան:

6. Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային առընթեր Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմիններում ռիսկերի կառավարման համակարգի զարգացման գծով աշխատանքային խմբին՝ ռիսկերի ցուցիչների միասնականացումն իրականացնելիս, միաժամանակ որոշել ռիսկերի նվազեցմանն ուղղված պարտադիր միջոցների ցանկը Ղազախստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմիններում ռիսկերի պրոֆիլներին համապատասխան դրանց միանման կիրառման նպատակով, նախատեսելով կիրառվող ռիսկերի պրոֆիլները ռիսկերի նվազեցման այլ միջոցներով լրացնելու հնարավորություն՝ հաշվի առնելով տեղափոխվող ապրանքների յուրահատկությունը, միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցի տեսակը, ապրանքների եւ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների տեղափոխման պայմաններն ու առանձնահատկությունները:

Նախագահ՝

Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝

Ա. Ֆ. Շպիլեւսկի

Նախագահի տեղակալ՝

Գ. Կ. Ամրին

Հավելված թիվ 1

Մաքսային միության անդամ պետությունների

մաքսային ծառայությունների միավորված

կոլեգիայի թիվ 10/12 որոշման

**Գործարքի բնույթի կոդերի ցանկ՝ գործարքի բնույթի այն դասակարգչին
համապատասխան, որը հաստատվել է Ղազախստանի Հանրապետության
ՖՆ ՄՀԿ-ի կողմից**

Ծածկագիրը	Մատակարարման տեսակները
Հաշվարկներն ըստ քլիրինգի	
031	Ապրանքների տեղափոխում՝ հաշվարկելով քլիրինգային արժույթով (բացի պետական վարկից (արտաքին փոխառությունից) եւ պետական վարկը (արտաքին փոխառությունը) մարելուց)
033	Ապրանքների տեղափոխում ըստ պետական վարկի (արտաքին փոխառության)
036	Ապրանքների տեղափոխում՝ որպես պետական վարկի (արտաքին փոխառության) մարում
Ապրանքների տեղափոխում այլ կոմերցիոն գործառնությունների նպատակով	
051	Ապրանքների տեղափոխում անմիջական ապրանքափոխանակման կարգով (բարտերային գործարքներ)
052	Ապրանքների տեղափոխում տրամադրված աշխատանքների եւ ծառայությունների դիմաց
054	Գազի տեղափոխում այլ երկրների տարածքով տարանցման համար
Այլ	
080	Այլ

**Գործարքի բնույթի կողերի ցանկ՝ գործարքի բնույթի այն դասակարգիչներին
համապատասխան, որոնք հաստատվել են Բելառուսի Հանրապետության
ՊՄԿ-ի կողմից**

Ծածկագիրը	Մատակարարման տեսակները
202	Ապրանքների փոխանցում ըստ փոխանակման պայմանագրերի
209	Ապրանքների փոխանցում մատուցված ծառայությունների դիմաց
211	Վերամշակման համար ապրանքների փոխանցում ըստ կապալի (ենթակապալի) պայմանագրերի՝ բացառությամբ վերանորոգման
212	Վերամշակելուց հետո ապրանքների փոխանցում ըստ կապալի (ենթակապալի) պայմանագրերի՝ բացառությամբ վերանորոգման
213	Ապրանքների փոխանցում կանոնադրական ֆոնդ՝ որպես ներդրում
215	Ապրանքների փոխանցում ցուցահանդեսային, մշակութային, լուսաբանող, հանդիսադիր, գովազդային, ինչպես նաեւ այլ միջոցառումներում ցուցադրման նպատակով
230	Ապրանքների փոխանցում՝ ըստ վարձակալության պայմանագրերի
231	Ապրանքների փոխանցում՝ օտարերկրյա անհատույց (մարդասիրական) օգնության, միջազգային տեխնիկական օգնության ցուցաբերման կարգով՝ ըստ նվիրատվության պայմանագրերի
232	Ապրանքների փոխանցում վերանորոգման նպատակով կամ դրանից հետո
233	Ապրանքների փոխանցում ըստ պահատվության պայմանագրերի
297	Ապրանքների փոխանցում առանց արտաքին տնտեսական գործարքի (պայմանագրի) կնքման
299	Արտաքին առետրային պայմանագրերով նախատեսված նպատակներով չօգտագործված ապրանքների վերադարձ

Ծանոթագրություն. Օգտագործվում են որպես ռիսկի ցուցիչներ, պայմանով, որ ապրանքները փաստացի հատել են մաքսային սահմանը, եւ մաքսային սահմանը հատելուց հետո այդ ապրանքների նկատմամբ առաջին անգամ է մաքսային ընթացակարգ սահմանվում՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի:

**Գործարքի բնույթի կողերի ցանկ՝ գործարքի բնույթի այն դասակարգչին
համապատասխան, որն հաստատվել է Ռուսաստանի ԴՄԾ-ի կողմից**

Ծածկագիր	Մատակարարման տեսակներ
Ռեզիդենտի եւ ոչ ռեզիդենտի միջեւ հատուցելի գործարք՝ տեղափոխվող ապրանքների համար հաշվարկներով	
012	Ապրանքների մատակարարում հատուցելի հիմքով՝ ըստ փոխանակման պայմանագրի (բացի դրանից օգտագործելով կամ չօգտագործելով դրամական կամ վճարային այլ միջոցները)
018	Անհատույց մատակարարում (վերադարձ բողոքագրի հիման վրա՝ վերանորոգելու կամ փոխելու համար, սխալ մատակարարում, երաշխիքային սպասարկում, նմուշներ՝ այդ թվում սպառվող, եւ այլն)
Ռեզիդենտի եւ ոչ ռեզիդենտի միջեւ հատուցելի գործարք, որով նախատեսվում է ծառայությունների մատուցում (աշխատանքների կատարում, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխանցում)	
024	Ցուցահանդեսային միջոցառումների անցկացման համար նախատեսված ապրանքների մատակարարում (ցուցահանդեսային ապրանքներ, ծախսվող նյութեր)
026	Ապրանքների մատակարարում՝ ըստ պահատվության պայմանագրերի (այդ թվում՝ այնպիսի պայմանագրերի, որոնցով նախատեսվում է խմբաքանակների կոմպլեկտավորում) (բացի 022 կոդով կոդավորվող ապրանքներից)
028	Անհատույց մատակարարում (վերադարձ բողոքագրի հիման վրա, հումքի մատակարարում վերամշակման համար, վերամշակման թափոններ, որոնց համար հաշվարկներ նախատեսված չեն, սխալ մատակարարում, նմուշներ, երաշխիքային սպասարկում, հաշվետվություններ (բացի 023 կոդով կոդավորվող ապրանքներից), որոնք պայմանագրի առարկա չեն հանդիսանում, ծառայում են որպես իրականացված աշխատանքների (ծառայությունների մատուցման) փաստի հաստատում, նմուշներ՝ այդ թվում սպառվող, ինչպես նաեւ ապրանքներ/սարքավորումներ, որոնք անհրաժեշտ են աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար եւ որոնց արժեքը ներառված չէ աշխատանքների (ծառայությունների) գնի մեջ, եւ այլն)
Կապալի պայմանագիր, այդ թվում՝ շինարարական, ռեզիդենտի եւ ոչ ռեզիդենտի միջեւ	
030	Աշխատանքների գնի մեջ ներառվող շինարարական, հարդարման եւ այլ նյութերի (ապրանքների) մատակարարում
031	Տեխնիկայի (սարքավորումների) մատակարարում, որն օգտագործվում է այլ պետության տարածքում աշխատանքների կատարման համար, որի արժեքը չի ներառվում աշխատանքների գնի մեջ (բացառությամբ ամորտիզացիայի) եւ ենթակա չէ վճարման

035	Ապրանքների վերադարձ բողոքագրի հիման վրա, որով նախատեսվում է վճարված դրամական կամ այլ վճարային միջոցների կամ փոխանցված այլ հակընդդեմ տրամադրված միջոցների վերադարձ
038	Անհատույց մատակարարում
039	Այլ հատուցվող մատակարարումներ
Ռեզիդենտի եւ ոչ ռեզիդենտի միջեւ վարձակալության/լիզինգի պայմանագիր	
040	Հայտարարագրվող ապրանքի փոխանցում վարձակալության/լիզինգի նպատակով
041	Հայտարարագրվող ապրանքի փոխանցում վարձակալության/լիզինգի նպատակով՝ հետգնման իրավունքով
042	Վարձակալության/լիզինգի առարկայի վերադարձ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուն պես
043	Վարձակալության/լիզինգի առարկայի հետգնում՝ մնացորդային արժեքով
044	Հայտարարագրվող ապրանքի փոխանցում որպես վարձակալության/լիզինգի վճար
045	Ապրանքների վերադարձ բողոքագրի հիման վրա, որով նախատեսվում է վճարված դրամական կամ այլ վճարային միջոցների կամ փոխանցված այլ հակընդդեմ տրամադրված միջոցի վերադարձ
048	Անհատույց մատակարարում
049	Այլ հատուցվող մատակարարումներ
Այլ	
050	Ապրանքների մատակարարում՝ ռուսաստանյան անձանց կողմից արտասահմանում կամ օտարերկրյա անձանց կողմից Ռուսաստանի Դաշնությունում ներդրումային գործունեության իրականացման ժամանակ բաժնետոմսերի (պարտատոմսերի), կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում սեփականության իրավունքի կամ մասնաբաժնի (ներդրման) ստացման դիմաց (առանց ապրանքների արժեքի փոխհատուցման՝ դրամական կամ այլ տեսքով)
051	Որպես շահաբաժին ստացված ապրանքների տեղափոխում
052	Ապրանքների մատակարարում ըստ ռեզիդենտների միջեւ կնքված պայմանագրի՝ օտարերկրյա անձի մասնակցությամբ, արտաքին առևտրային գործարքի բացակայության դեպքում (բացի 054 կոդով կոդավորվող ապրանքների)
053	Ապրանքների մատակարարում՝ ըստ ոչ ռեզիդենտների միջեւ կնքված պայմանագրի՝ ռուսաստանյան անձի մասնակցությամբ, արտաքին առևտրային գործարքի բացակայության դեպքում (բացի 054 կոդով կոդավորվող ապրանքների)
054	Ապրանքների մատակարարումներ սեփական կարիքների համար գլխամասային կազմակերպության եւ դրա մասնաճյուղի (ներկայացուցչության) միջեւ, որը տեղակայված է այլ պետության

	տարածքում, առանց իրացման կամ այլ օգտագործման նպատակի, արտաքին տնտեսական գործարքով նախատեսված պարտավորությունները կատարելիս:
058	Անհատույց գործարք (շնորհ, հումանիտար օգնություն, որով նախատեսված չէ ռեզիդենտի եւ ոչ ռեզիդենտի միջեւ հաշվարկներ, ժառանգություն, նվիրատվություն եւ այլն), ինչպես նաեւ արտաքին տնտեսական գործարքի շրջանակներից դուրս սեփական կարիքների համար այնպիսի ապրանքների մատակարարում, որոնք նախատեսված չեն հետագա իրացման համար, եւ նմ. (բացի 054 կոդով կոդավորվող ապրանքների)
059	Իրավաբանական անձանց, այդ թվում՝ լիազորված բանկերի կողմից զտարկված թանկարժեք մետաղների ծուլակտորների տեղափոխում՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս գտնվող բանկերի մետաղական հաշիվներին դրանց տեղակայման պայմանագրերի
060	Իրավաբանական անձանց կողմից կանխիկ արժույթի (այդ թվում՝ մանրուն մետաղադրամների/թղթադրամների կամ օդանավերի հարթակներին, երկաթուղային կամ այլ տեսակի տրանսպորտի վրա ապրանքների իրացումից հասույթի տեսքով) եւ (կամ) արժեթղթերի տեղափոխում

Հավելված թիվ 2

Մաքսային միության անդամ պետությունների
մաքսային ծառայությունների միավորված
կոլեգիայի թիվ 10/12 որոշման

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ապրանքների ծագման երկրի մասին տեղեկությունների ոչ հավաստի հայտարարագրման ռիսկերի ոլորտների հայտնաբերման մեթոդիկա

1. Ընդհանուր դրույթներ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների կողմից ապրանքների ծագման երկրի մասին տեղեկությունների ոչ հավաստի հայտարարագրման ռիսկերի ոլորտների հայտնաբերման մեթոդիկան (այսուհետ՝ Մեթոդիկա) մշակվել է համակարգված գործողությունների իրականացման եւ ապրանքների ծագման երկրի մասին տեղեկությունների ոչ հավաստի հայտարարագրման ռիսկերի նվազեցման եւ հայտնաբերման վերաբերյալ միասնական մոտեցումներն սահմանելու նպատակներով Մաքսային միության շրջանակներում:

Ապրանքների ծագման երկրի որոշումն իրականացվում է բոլոր այն դեպքերում, երբ մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառումը պայմանավորված է ապրանքների ծագման երկրով:

Մեթոդիկայում օգտագործվում են հետեւյալ եզրույթները եւ սահմանումները՝ Մաքսային Միության մաքսային օրենսգրքին համապատասխան:

Ապրանքների ծագման երկիրն այն երկիրն է, որտեղ ապրանքներն ամբողջությամբ արտադրվել կամ ենթարկվել են բավարար մշակման (վերամշակման)՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված

չափանիշներին համապատասխան: Ընդ որում, «ապրանքների ծագման երկիր» ասելով կարող է ենթադրվել երկրների խումբը կամ երկրների մաքսային միությունները կամ երկրի որեւէ տարածաշրջանը կամ մասը, եթե անհրաժեշտ է դրանք տարանջատել ծագման երկիրը որոշելու նպատակով:

Ապրանքի ծագման հավաստագիրը ապրանքների ծագման երկրի մասին միանշանակորեն վկայող եւ այդ երկրի կամ արտահանման երկրի լիազորված մարմինների կամ կազմակերպությունների կողմից տրված փաստաթուղթ է, եթե արտահանման երկրում հավաստագիրը տրվում է ապրանքների ծագման երկրից ստացված տեղեկությունների հիման վրա:

Ռիսկի ցուցիչներ՝ նախապես սահմանված պարամետրեր ունեցող որոշակի չափորոշիչներ, որոնցից շեղումը կամ որոնց հետ համապատասխանությունը թույլ է տալիս իրականացնել հսկողության ենթակա օբյեկտի ընտրություն:

2. Ռիսկի ցուցիչները ձեւավորելիս օգտագործվող տեղեկատվական աղբյուրները

Ռիսկերի ցուցիչները ձեւավորելու նպատակով Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների պաշտոնատար անձինք օգտագործում են հետեւյալ աղբյուրները՝

1) ապրանքների (օպերատիվ նշանակության եւ բացթողնված) մասին հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների տվյալների բազաները.

2) իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, ԱՏԳ-ի մասնակիցների կողմից էլեկտրոնային (այդ թվում՝ ձեւայնացված) տարբերակով ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային արխիվը.

3) մաքսային հայտարարագրերի, ապրանքների մասին հայտարարագրերի ճշգրտումների, ապրանքների ծագման հավաստագրերի, մաքսային զննությունների (տեսազննությունների) ակտերի, մաքսային դիտարկման

ակտերի, մաքսային հսկողության արդյունքների հիման վրա կազմվող այլ ակտերի, ինչպես նաև առեւտրային, տրանսպորտային եւ ԱՏԳ-ի մասնակիցների կողմից ներկայացվող կամ մաքսային մարմինների կողմից կազմվող այլ փաստաթղթերի թղթային օրինակները.

4) տարանցիկ փոխադրման հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների տվյալների բազաները.

5) այլ պետությունների մաքսային ծառայությունների հետ տեղեկությունների փոխանակման տվյալների բազաները, այդ թվում՝ նախնական տեղեկությունների օգտագործմամբ տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների նկատմամբ.

6) ապրանքները, արտաքին տնտեսական գործառնությունները եւ անձանց ռիսկի խմբերին դասելու տիպային չափանիշների ցանկերը.

7) ռիսկերի նվազեցման ուղղությամբ միջոցների կիրառման արդյունքների մասին տեղեկությունները.

8) այլ պետությունների մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառման արդյունքների մասին տեղեկությունները.

9) կնիքների դրոշմվածքների, ստորագրությունների, փաստաթղթերի ձեւերի, մաքսային նույնականացման միջոցների նմուշները.

10) մաքսային եւ այլ փորձաքննությունների արդյունքները.

11) հսկողություն իրականացնող այլ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ հասարակական միավորումների հարցումները եւ տեղեկությունները.

12) այլ պետությունների մաքսային ծառայություններ միջազգային հարցումներ ուղարկելու արդյունքներով ստացված տեղեկատվությունը.

13) այլ պետություններում ներկայացուցչություններից (ներկայացուցիչներից) ստացված տեղեկությունները.

14) մաքսային մարմինների իրավասության շրջանակին դասվող հարցերով հրատարակված իրավական ակտերում պարունակվող տեղեկատվությունը.

15) քաղաքացիների եւ իրավաբանական անձանց դիմումներն ու բողոքները.

16) զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկությունները.

17) ինտերնետ ցանցում տեղադրված տեղեկությունները.

18) տեղեկատվական այլ աղբյուրները, այդ թվում՝ սեփական վերլուծական նյութերը, տեղեկություններ տեղեկատվական անկախ աղբյուրներից:

3. Տվյալների ընտրության կատարման կարգը եւ դրա արդյունքները

Ռիսկի արժեքային ցուցիչների ընտրությունը իրականացվում է տեղեկատվության աղբյուրների վերլուծության արդյունքների փորձագիտական գնահատման մեթոդի կիրառմամբ՝ Մեթոդիկայի 2-րդ բաժնին եւ Մաքսային միության անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

Տեղեկատվության աղբյուրների հիման վրա որոշվում է ռիսկի ոլորտը, որը կարող է ներառել հետեւյալ չափանիշները՝

1) ապրանքի բավարար մշակման/վերամշակման չափանիշը չպահպանելու նշանները.

2) անմիջական մատակարարման եւ ուղղակի գնումների կանոններին չհետեւելը.

3) ապրանքների երթուղին հանդիսանում է տնտեսապես ոչ նպատակահարմար.

4) ապրանքների ծագման երկիրը հայտնի չէ.

5) ներկայացված տրանսպորտային եւ ապրանքներն ուղեկցող փաստաթղթերում կնիքների ու դրոշմակնիքների դրոշմվածքների եւ (կամ) այն

երկրների օտարերկրյա մաքսային մարմինների պաշտոնատար անձանց նշումների ու ստորագրությունների բացակայություն, որոնց տարածքներով իրականացվում է ապրանքի առաքումը.

6) ուղարկող մաքսային մարմնից ստացված ուղարկված ապրանքի մասին էլեկտրոնային ծանուցման, տարանցիկ փոխադրման հայտարարագրի կամ ՄՃՓ գրքույկի մեջ պարունակվող տեղեկությունների չհամընկնումը ԱՀ-ի մեջ հայտարարագրված տեղեկությունների հետ, եթե նշված չհամընկնման դեպքերը կհանգեցնեն վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի մեծության նվազեցմանը կամ արգելքների ու սահմանափակումների կիրառումից խուսափելուն.

7) ապրանքներ, որոնք կարող են օգտագործվել որպես քողարկման ապրանքներ այն ապրանքների համար, որոնց նկատմամբ կիրառվում են մաքսատուրքերի հատուկ տեսակներ (հատուկ, հակազնազցման, փոխհատուցման).

8) ապրանքների ներմուծում տվյալ երկրում նշված ապրանքների արտադրության (աճեցման, վերամշակման) մասին առկա տեղեկությունները գերազանցող քանակությամբ.

9) ապրանքների հայտարարագրում տարվա այն ժամանակահատվածում, որը բնորոշ չէ դրանց ներմուծման/արտահանման հիմնական սեզոնին (արտադրություն/ աճեցում).

10) երկրներ, որոնցից ապրանքներ ներմուծելիս գրանցվել են արգելքները, սահմանափակումները եւ մտավոր սեփականության իրավունքները չպահպանելու հետ կապված հաճախակի խախտումներ.

11) ապրանքն ուղարկող երկիրը միաժամանակ չի համարվում ծագման երկիր եւ (կամ) վաճառող երկիր.

12) երկրներ, որոնց մասով առկա է այնպիսի նմանակված (կոնտրաֆակտ) ապրանքների կամ առանձին ապրանքների արտադրության մասին

տեղեկատվություն, որոնց նկատմամբ Մաքսային միության անդամ պետություններում սահմանվել են արգելքներ եւ սահմանափակումներ.

13) առուվաճառք իրականացնող երկիր (ուղարկող երկիր, նշանակման երկիր) համարվում է այն երկիրը, որի նկատմամբ սահմանվել են միջազգային օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցներ.

14) ապրանքի ծագման հավաստագիրն ունի ջնջումներ կամ վրիպակներ կամ ձեւակերպվել է այն լրացնելու կանոնները խախտելով.

15) ապրանքի ծագման հավաստագիրը ներկայացվել է արտաքին տնտեսական գործունեության մասնակցի կողմից, որի մասով նախկինում բացահայտվել են ապրանքների ծագման մասին անվավեր հավաստագրեր ներկայացնելու դեպքեր.

16) Ռիսկի այլ ոլորտներ եւ չափանիշներ, որոնք կարող են ազդել ծագման երկիրը ճիշտ որոշելու վրա:

4. Ռիսկի ցուցիչների ձեւավորումը

Ռիսկի ցուցիչները ձեւավորելիս ծագման երկրի մասին տեղեկությունների հայտարարման հսկողության նպատակով օգտագործվում են ԱՀ-ի էլեկտրոնային պատճենների տվյալների բազայի հետեւյալ տեղեկությունները՝

1) մաքսային ընթացակարգ՝ ապրանքի բացթողում ներքին սպառման համար.

2) ուղարկողն ու նրա հասցեն (տեղեկություններ ԱՀ-ի 2-րդ վանդակից).

3) ստացողն ու նրա հասցեն (տեղեկություններ ԱՀ-ի 8-րդ վանդակից).

4) ապրանքը ուղարկող երկիրը (տեղեկություններ ԱՀ-ի 15-րդ վանդակից).

5) ապրանքի ծագման երկիրը (տեղեկություններ ԱՀ-ի 16-րդ վանդակից).

6) ապրանքի նկարագիրը, այդ թվում՝ արտադրողի եւ ապրանքային նշանի

մասին տեղեկությունները (տեղեկություններ ԱՀ-ի 31-րդ վանդակից)։

7) ապրանքի ծածկագիրն ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի (տեղեկություններ ԱՀ-ի 33-րդ վանդակից)։

8) արտոնությունները (տեղեկություններ ԱՀ-ի 36-րդ վանդակից)։

9) հավելյալ տեղեկատվություն եւ ներկայացված փաստաթղթերը (տեղեկություններ ԱՀ-ի 44-րդ վանդակից)։

10) բրուտո քաշը, կգ (տեղեկություններ ԱՀ-ի 35-րդ վանդակից)։

11) նետո քաշը, կգ (տեղեկություններ ԱՀ-ի 38-րդ վանդակից)։

12) մաքսավճարների հաշվարկումը (տեղեկություններ ԱՀ-ի 47-րդ վանդակից)։

Ցուցիչների արժեքները սահմանվում են՝ ըստ ուսումնասիրվող ոլորտի եւ ռիսկի չափանիշների, ինչպես նաեւ հաշվի առնելով ռիսկի ուսումնասիրվող ոլորտների հատումը կամ ամբողջությունը։

Հավելված թիվ 3

Մաքսային միության անդամ պետությունների

մաքսային ծառայությունների միավորված

կոլեգիայի թիվ 10/12 որոշման

**Ռիսկերի միասնականացված ցուցիչներ պարունակող ռիսկերի պրոֆիլների
մշակման եւ կիրառման ընթացքում օգտագործման համար նախատեսված
ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների ցանկը**

Համարը՝ ը/կ	Անվանումը
1	Փաստաթղթերի եւ տվյալների ստուգում
2	Ապրանքների մաքսային զննում
3	Միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների մաքսային զննում
4	Ապրանքների փորձանմուշների եւ նմուշների ընտրություն
5	Ապրանքների մաքսային փորձաքննություն
6	Փաստաթղթերի մաքսային փորձաքննություն
7	Ապրանքների նույնականացման միջոցների մաքսային փորձաքննություն
8	Լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ հարցում՝ մաքսային փաստաթղթերում պարունակվող տեղեկատվության ստուգման նպատակով
9	Մաքսային տեսազննում
10	Ապրանքների, միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների եւ բեռնարկերի մաքսային տեսազննում՝ տեսչական եւ զննման համալիրների օգտագործմամբ
11	Ապրանքների մասին հայտարարագրում հայտարարված տեղեկությունները հաստատող, սահմանված կարգով վավերացված պայմանագրերի բնօրինակները եւ (կամ) փաստաթղթերի պատճենները թղթային կրիչի վրա տրամադրելու մասին հարցման ուղարկում հայտարարատուին (ապրանքներն էլեկտրոնային տեսքով հայտարարագրելու դեպքում)